Վանաձոր համայնքի ղեկավար

պարոն Մամիկոն Ասլանյանին՝

Վանաձորի պատվավոր քաղաքացի

Վանդոս Հմայակի Ղարագյոզյանից

(Ազատամարտիկների 20/45 հեռ (093)07-50-07)

Հարգելի պարոն քաղաքապետ

Մեր քաղաքում պաշտոնավարած մտավորականների անունից խնդրում եմ Վանաձորի ավագանու համաձայնությունը Տիգրան Մեծ 39 հասցեի շենքի պատին Կիրովականի քաղգործկոմի նախկին նախագահ ,Հայրենական մեծ պատերազմի վետերան,փոխգնդապետ Սարգիս Առաքելի Ամիրխանյանի հիշատակը հավերժացնող հուշաքար փակցնելու համար:

Կից ներկայացնում եմ .

- Սարգիս Ամիրխանյանի համառոտ կենսագրությունը,
- Հուշաքարի նախագիծը:

Նախաձեռնող խմբի ղեկավար Վանդոս Ղարագյոզյան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
«18» 08 2021թ
Մտից N 02 Գործ N 11962


REPUBLIC OF ARMENIA ID CARD
GHARAGYOZYAN
VANDOS
LUM
<<ARM
31.03.1949
003840279
27.01.2025

1953-1993թթ.
այս շենքում բնակվել է
Հայրենական Մեծ
Պատերազմի մասնակից
փոխգնդապետ
Կիրովականի քաղաքային
խորհրդի նախագահ

# ՍԱՐԳԻՍ ԱՌԱՔԵԼԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԸ

# ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՌԱՔԵԼԻ

Սարգիս Ամիրխանյանը ծնվել է 1910թ. Իջևանի շրջանի Սարիգյուղում, միջնակարգ կրթությունը ստացել է Դիլիջան քաղաքում: 1940 թվականին գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտը: 1931-32թթ. որպես դպրոցի դիրեկտոր աշխատել է Թումանյանի շրջանի Դսեղ գյուղում:

Ամիրխանյանը Կիրովականի 6-րդ դպրոցի դիրեկտորն էր, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Հրաժեշտ տալով դպրոցին, նա 1941 թվականի հունիսի 23-ին կամավոր մեկնեց ռազմաճակատ: Ռազմաճակատ են մեկնում նաև 6-րդ դպրոցի 10-րդ դասարանի շրջանավարտ գրեթե բոլոր տղաները: Նրանցից շատերը աչքի են ընկնում իրենց մարտական գործողություններով, պարգևատրվում շքանշաններով:

Ամիրխանյանը մարտնչում է 47-րդ բանակի 236 դիվիզիայի 814-րդ գնդում, որպես վաշտի, ապա՝ գումարտակի հրամանատար: Նրա գումարտակը աչքի է ընկնում Ղրիմի ազատագրման մարտերում, կարողանում է հաջողությամբ կատարել գնդի հրամանատարության առաջադրանքը, կասեցնել թշնամու առաջխաղացումը: Դա հնարավորություն է տալիս գնդին գլխովին ջախջախել պաշտպանական շրջանը ներխուժած գերմանաֆաշիստական զավթիչներին:

Մարտերից մեկում գումարտակի հրամանատար Ամիրխանյանը ծանր վիրավորվում է և տեղափոխվում թիկունք: Ապաքինվելուց հետո վերադառնում է գործող բանակ, մարտնչում է 409-րդ հրաձգային դիվիզիայում, որը գտնվում է Ռումինիայում: Այստեղ կարճ է տևում նրա ծառայությունը, պատերազմում ստացած վերքերը ստիպում են նորից բուժման գնալ: Առողջությունը վատանալու պատճառով 1944 թվականի օգոստոսին Ս. Ամիրխանյանը զորացրվում է բանակից՝ փոխգնդապետի կոչումով:

Հայրենական պատերազմում ցուցաբերած արիության ու տոկունության համար Սարգիս Ամիրխանյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով և մի շարք մեդալներով: Զորացրվելուց հետո նա աշխատում է որպես Կիրովականի քաղսովետի գործկոմի